Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
Սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը.

Անահիտ Ավանեսյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ առողջապահության նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները.

2021թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 1-ը, Բելգիայի Թագավորություն, Բրյուսել

4. Հրավիրող կողմը.

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակն էր Համաեվրոպական հոգեկան առողջության կոալիցիային մասնակցությունը: Միջոցառմանը, որը կազմակերպվել էր Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) հովանու ներքո, մասնակցում էր Բելգիայի Թագավորության Ն. Մ. Թագուհի Մաթիլդը:

Համաժողովին ներկա են գտնվել ԱՀԿ անդամ-պետությունների բարձրաստիճան պաշտոնյաներ, նախարարներ, դեսպաններ, միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

6. Քննարկված թեմաները.

Միջոցառման ընթացքում մասնակիցները կլոր սեղանի շուրջ քննարկել են կոալիցիայի առաջիկա աշխատանքներին առնչվող անելիքները:

Հոգեկան առողջության կոալիցիան ԱՀԿ-ին կաջակցի հոգեկան առողջությանն ուղղված 2021-2025 թվականների գործողությունների շրջանակում եվրոպական ծրագրերի իրականացմանը, որի նպատակն է հասարակության բոլոր մակարդակներում փոխել հոգեկան առողջության ընկալումը՝ սահմանելով վերջինս որպես առաջնահերթություն առողջապահության ոլորտի ղեկավարների և քաղաքականություն մշակողների շրջանում:

Միջոցառման մասնակիցները ընդգծել են, որ համավարակով պայմանավորված ճգնաժամը նպաստել է հոգեկան առողջության կարևորության շուրջ համընդհանուր գիտակցության ձևավորմանը՝ որպես ամուր առողջության անհրաժեշտ նախապայման: Միևնույն ժամանակ, համավարակն ավելի սրել է հոգեկան առողջության կառավարման դժվարությունները և ամրապնդել այդ մարտահրավերներին դիմագրավելու համաշխարհային գործողությունների անհրաժեշտությունը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

ՀՀ առողջապահության նախարարը հանդես է եկել ելույթով, որտեղ ընդգծել է համաժողովի դերը՝ որպես հոգեկան առողջության ոլորտում ԱՀԿ անդամ-պետությունների փորձն ուսումնասիրելու բացառիկ հնարավորություն՝ հետագայում Հայաստանում կիրառելու տեսանկյունից: Ներկայացվել է նաև հոգեկան առողջությունը խթանելու հայաստանյան փորձը՝ առանձնացնելով այն խնդիրները,

որոնց Հայաստանը բախվել է ոչ միայն COVID-19-ի դեմ պայքարի ընթացքում, այլև պատերազմական իրավիճակում:

Նախարարն անդրադարձել է հոգեկան առողջության կարիքների լուծման համար կատարված աշխատանքներին, ինչպես նաև մատնանշել բարելավման անհրաժեշտություն ունեցող որոշ ուղղություններ, մասնավորապես՝ թվային տեխնոլոգիաների ոլորտը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները.

Հանդիպման շրջանակներում Անահիտ Ավանեսյանն առանձնազրույցներ է ունեցել Առողջապահության և սննդի անվտանգության հարցերով ԵՄ հանձնակատար Ստելլա Կիրիակիդեսի, Ռումինիայի նախագահի առողջապահության գծով խորհրդական Դիանա Պաունի և Հունաստանի առողջապահության նախարարի տեղակալ Զոի Ռափթիի հետ, քննարկել Հայաստանում COVID-19-ի դեմ պատվաստանյութերի հասանելիության խնդիրներն ու ձեռքբերման հնարավորությունները:

Այցի շրջանակում հանդիպում է կայացել Բելգիայի Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. Աննա Աղաջանյանի հետ:

Հանդիպմանը քննարկվել են մի շարք հարցեր, այդ թվում՝ Հայաստանում հակահամաճարակային իրավիճակի և պատվաստումային գործընթացի հետ կապված խնդիրներ:

Հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպմանը անդրադարձ է եղել պատերազմի ընթացքում կատարված լայնածավալ աշխատանքներին և հետագա անելիքներին:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպումների ընթացքում ձեռքբերված պայմանավորվածությունները կյանքի կոչելու համար կողմերը պատրաստակամություն են հայտնել պարբերաբար իրականացնել աշխատանքային կարգով քննարկումներ՝ հեռահաղորդակցման հնարավոր միջոցներն օգտագործելով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

6 հոկտեմբերի, 2021թ.